

**Մայիս 17.** Սրբազնն Սինօդը առաջատար մէկնեան մազիսարսու վաղիք Փերձ Պո.օշ-  
եալոցին թոյլատում է, չորս ամիս ժամանակով գնալ արտասահման Փարիզի ցուցահան-  
գելով:

**Մայիս 17.** Սինօդը թոյլատում է, 8րփ-  
խիսի կոնսիստորիային Աստղիսայի ու Փրկիչ  
եկեղեցուց փախարթնարար 4000 ր. վերցնել և  
առաջ թագավորում քաղաքի եկեղեցու շնութիւնը  
վերջացնելու համար: Եթնութեան տւարտու-  
մայ յետոյ թագավորում եկեղեցու եկամուտներից  
պետք է տարեկան 1000 ր. յետ տասնալ ու  
Փրկիչ եկեղեցուց վերջրած պարագը ծածկե-  
լու համար:

**Մայիս 17.** Հունատում է, Երեանսի Հեռոն  
Տարիի երրորդեանի պատկը Սրբուհի Թովակիմ-  
եանի հետ, վերջինիս թոյլ է տրում: Կրկին  
ամուսնանար:

**Մայիս 19.** Ընդունում է, հոգեոր կոչ-  
ման մէջ Գրիգոր (որ և Պատուական) Տէր  
Առաջնուանը՝ Մովկու գիւղից Համար քահանաց  
մասնադրուելու:

**Մայիս 19.** Հունատում է, Մովկու Խաչա-  
տրիանցի (Մովկու գիւղից, Տփիսի թեմ) պատկը իւր կին Սուլթան Խաչատրիանցի հետ  
և թոյլ է տրում: մարդուն ամուսնանալ  
ուրիշի հետ:

**Մայիս 22.** Հունատում է, Շուշեցի Միքա-  
յիլ Խաչատրեանցի պատկը իւր կնոջ Աննա  
Արքահամեանի հետ և թոյլ է տրում: վեր-  
ջինիս գորութեամբ օրինաց 2-րդ կետի 45-ր  
յօդ 10-րդ հասոր մասն Ա, նորից ամուս-  
նանար:

**Մայիս 24.** Հունատում է, Գանեակեցի  
Վասինկայի պատկը իւր ամուսին Տըգաստ  
Խաչեանցի հետ և թոյլ է տրում: կնոջը  
նորից ամուսնանարու վերոյիշեալ յօդուածի  
գորութեամբ:

**Մայիս 24.** Հունատում է, Շամիր Միքա-  
յիլեանցի (Աստրախանի թեմ) պատկը իւր կին  
Թամանի հետ և թոյլ չի տրում: ոչ մէկին  
նոցանցի նորից ամուսնանաւու:

**Մայիս 31.** Հունատում է, Շողակաթ Մա-  
նուկեանի պատկը իւր ամուսին Յարութիւն  
Մատթեոսեանի հետ և վերջինիս թոյլ է  
տրում: նորից ամուսնանալ (Երեանի թեմի  
Սարի Բաշ գլուղ):



## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՑ ՄԵՍԻՆ

**ՀԱՐՑԱՌՈՒՄ** եմ ձեզ, քրիստոնեայ հայ  
եղբայրներս, երբ ապաշխարութեան օրերու  
մաքրիչ հոգի թարմութիւն տուաւ ձեր թըմ-  
րած աչքերին ու ձեր ծանրացած արտեա-  
նունքները վեր բարձրացան, ի՞նչ տեսաք  
առաւել հսկայական առաքինութիւնների շար-  
քում: սէրը չէր արդեօք: Եթէ, ոչ վայ մեզ,  
վասն զի առաքինութեանց պարտէզը մտնել  
կարող չէք առանց սիրոյ, որ հրաշալեաց  
դրախտի միակ դուռն է, միակ մուտքը:

Մւր եր թէ կարող լինէի սէրը սահմա-  
նելց որ մի անհունութիւն է, սէրը պատմելց  
որ անձանելի է: Դա մի զգացմունք է, որ  
Աստուած մարդու կրծքի մէջն է զրել նորա  
ստեղծագործութեան օրից, որպէս զի կեան-  
քը շարունակուի, կեանքը քաղցրանց և կեան-  
քը կատարելս զործուի ու հրաշանայ: Այս  
խօսքերն ես ի զուր չեմ շեշտում՝ շարու-  
նակուի, քաղցրանց, կատարելս զործուի կամ  
հրաշանայ, վասն զի սէրը երեք համապա-  
տասխան արտայայտութիւն ունի: Ամուսնա-  
կան սէր, որ երկու անձնաւորութիւնց կրծ-  
քումն է, խօսում: նորա զրիումն է, պահուում:  
կեանքը շարունակութիւնը: Որդիական և ծը-  
նողական սէր, նախորդին և յեանորդին իրար  
հետ կապող սէրն է այս և հինգ այդ կապը  
կեանքին քաղցրութիւն է առիս: Որքան և  
սկզբնական է, սիրոյ այս երկու տեսակը, այնու-  
ամենայնիւ դորա շատ նեղ են, դոցա մէջ լոկ  
մերձաւորների երջանկութիւնը կայ, որոնցից  
դուրս միայն անսարքերութիւն և ատելու-  
թիւն ու նախանձն են թագաւորում: եսա-  
կանութեան այս հարուստ բերքերը: Եթէ  
այս տեսակի սէրը սիրոյ ծառի արմանն է, չէ  
սակայն ամրուց ծառը չի հազարաւոր ճիւղ,  
ծաղիկի ու պտուղով պատկրած համատարած  
բարձունքը սիրոյ: Ես լուսմ եմ սիրոյ այս

տեսակների մասին և կանդ եմ առնում այն սիրոյ վերայ, որ կեանքն է կատարելագործում որ հրաշացնում է կեանքը. այդ տեսակը Քրիստոնէական սէր անունն է կրում:

Այն սրտակուոր վայրկինին, երբ Գոզգոթայի բարձունքում՝ Ամենայն ինչ կատարեալ է, վերջին հառաջանքը ցամքեցաւ անարաա զոհի շրժունքների վերայ, նոյն հառաջանքից մի ծաղիկ բուսաւ ու բոլորեց արիւնու խաչը: Խաչակիր ու խաչապաշա քրիստոնեայ, երբ պաշաէ խաչն ու մերժէ այն ծաղիկը, որ խաչի զօրութիւնն է, խորհուրդն է, հոգին է, ամրողջ մեռնող խաչեցեալից միշտ անբաժան ու անմաշ խաչեցեալն է: Այդ ծաղիկը ու հայութեական սէրն է:

Քրիստոնէական սէրը մի անհունութիւն է, որ բարութեամբ է լցրած. նա ամփոփում է, իւր մէջ ոչ միայն որոշ անհաների բարելառութիւնը այլ ամրողջ մարդը. նա տարածուում է նոյն խակ մարդկանցից զուրա կենդանիների չերայ: Քրիստոնէական սէրը հառաքում բերում է բոլոր մարդոց ու լեցնում սիրողի սիրաը. կապուում են սիրողները սիրողի հետ և բոլորը միասին միանում՝ Աստուծյ հետ, որ կատարեալ Սէրն է: Հէնց այդ ներդաշնակ միաւորութեան մէջն է կատարելութիւնը, հրաշքը կեանքի:

Ծշմարիա քրիստոնէի համար մէկ առաքինութիւն կայ միայն, և այն սէրն է. մնացեալ առաքինութիւնները լոկ սիրոյ ձիւզառութիւններն են: Սիրողը գթոս է, որով հետև սէրն անգութ լինել չի կարող. համբերող է՝ որովհետեւ երկայնամիտ է, վիշանձն է՝ որովհետեւ սէրը նախանձ չունի, հեզ է՝ որովհետև սէրը հպարտ լինել չի կարող, բարի է՝ որովհետեւ սիրողը չարիք հասցնել չի կարող, ներողամիտ է՝ որովհետեւ սէրը խստափրած է, և լն: Այս խակ պատճառով ես չեմ հաւատումթէ՝ որեւէ յանցանք կարող է զրկել մարդուն Աստուծյ արքայութիւնից, եթէ մարդ իմացել է քրիստոնէական սիրով սիրել:

Ուր է քրիստոնէական սէրը: Քրիստոնէական սէրն ամենուրեք է. նա խօսում է սառուցեալ բեկաներում այրեցեալ երկներում արեան դաշտերում: մուխ բանակերում: նա նահատակների շիրիմների վերայ ծաղկող

արընդոյն վարդն է: Այս սիրուց էլ աւելի ամեն ինչ ընդդրկող հրաշք չի եղել. սէրն երկրագունախից ընդարձակ է, վաւն զի ամբողջ երկրագունան է պարունակում: սէրը և տիեզերքից մեծ է, վասն զի նա ծաւալուում է տիեզերքից մեծ Աստուծյ շուրջը:

Գուցի կուզեք քրիստոնէական սիրոյ պատկերներ տեսնելը բարի. գնանք այդ սիրով աղբողներից մէկի խղճուկ բնակարանը, մի քարայր որ մշտական ձիւնապատ լեռների գագաթուումն է գանուուում: Մոայլ գիշեր է, մարնչում է բուքը, ձեան հոսանքով բաղխում մատուռը: Մատրան մէջ խաչուած սիրոյ առաջ մի կանթելի է վառուուում: նորա աղօտ լուսի ատկ երկու հոգի ծռնկ իջած բոցոտ մրմունջներ են տարածուում խաչի պատուանգանի շուրջը: Ակեզարդ ծերուկը գարձաւ դէպի մասագ պատանին, որի ընչացքները հաղիւ եին սեացել. Որդեակ իմն կարող ես հաւատագիմ մնայ ուխտիդ, կարող ես այս սառացապատ միայնութեան մէջ, այս սոսկալի բուքերու տակ ճանապարհների վերայ ըրջել ու մոշրուած ճանապարհորդներին մահուան ձևաքից իւլերով մեր մատոււը բերել: — Այս հայր, պատուախանում է երիստաւարդը, մնաք բարով առում անձնական երջանկութեան, երկու կաթել գլորում աչքերից խաչի առաջ ու սե քօղը գլուխը քաշելով դուրս է սողում բուքերու տակ մոշրուած ճամբորդներուն օգնութիւն հասցնելու համար:

Աչք ածեցեք այս գաշաի վերայ ու եռացով կեանքը անսէք, խելազուրկ ու ապականուած ժողովութղը մէկ տեղ խունկ է ծխում մամոնցի արձանին, միւս տեղ չարամեյն լեզուով խայթում մերձաւորին, այսաեղ կեղծիք է ճառում կեղծ բարեպաշտը, այնտեղ այբեց և որբոց տունն ուառում կեղծ բարեզործը, այսաեղ խաբերայութեան, այնտեղ տղիտութեան անվերջ խաւար, այսաեղ օտարամոլութեան ախտն է եռում: այնտեղ սուրբ միշտակայ մնացորդը անարդ ուում: այսաեղ բունութիւն, այնտեղ անհականզութիւն: մէկ խօսքով ամեներեան խոտրեալ, ամեներեան սնապիտանացեալ, ամենեքեան կոյր և մօտակայ անկումն տեսնելու անզօր: Այս տիտուր պատկերի առաջ զեղ-

նում դպիսանում է, և նախնեաց սուրբ շիրմիների վերայ դաստիարակուած մէկը: Սորս հոգու մէջ անմիա ժողովրդի վլխին գալիք թշուառութիւնն է պատկերանում: Խոռովում է նորա հոգին: Սա շըջում է ատելութեամբ փրփրացող հրապարակի վրայ, նախատում յանդիմանում: դարձ քարողում: իսկ կատաղի ամրոխը նորա վերայ է բարձում իւր ախտերը, ապատկով ձադիւմ և անժամանակ երկրի անդյս ծոցը զրկում սիրոյ առաքեալին, որի շրմի շուրջը միայն ծաղկում ու պաղարերում է սերմանուած սէրը:

Աչա ձեզ մի ազնուական օրիորդ, փափկութեամբ սնուած, ծնողների սիրովը ցօղուած մի աչագեղ ազջիկ, որի վերայ շատ ընտիր երիտասարդների յուսայի աչքերն իին սեեռուած: Բայց աչա նա մերկանում է իւր զուքսն ու զարդը, մետաքսն ու կերպաս, հագնում կամուոր այրիութեան մե շորը կրծքի վերայ մի կարմիր խաչ կարում: Ժեն առնում հայրական ժառանգութիւնից մի կողովիկ միայն և անձնական բազդի գերեզմանի վերայ հոգւոց առելով հեռանում է: Ռւցում ես տեսնել նորան: մաիր ճանապարհիդ վերայի հիւնդանոցը. աչա նա լուանում է անտէր հիւնդի վերքը, հանում իւր կողովից սպեղանի ու փաթեթ և ամոքում թշուառի ցաւը: Մաիր վերան լանջում այրիի պէս մենակ ցցուած կեցած վանքը. աչա նա իւր կողովով հոգին ուրախ, գէմքը տիսուր գնում է շըջակայ գիւղեր, որբերի, այրիների արցունքը սրբրկու: Նա ժողովում նա կերակրում է քաղցածին: այրու քոյրը որբի մայրը նա է, վշաբերի մէջ՝ միիմարիչ մահուան անկողնում՝ յուսազրող, դառն վշատութիւնը քաղցրացնող այս քոյրն է, ողորմած քոյրը, քրիստոնէական սիրոյ այս ընտիր առաքեալը: Շատ են այսպիսիները:

Արդ տեսաք ուր է քրիստոնէական սէրը տեսաք քրիստոնէական սիրոյ լուսաշաղ պատկերը:

Սէրն ոյժ է, մի ոյժ, որ հզօր է տանձանքից, հզօր աշխարհի բոլոր ոյժերից, նզօր է մահից, մահու սարսափը սոսկալով փախչում է սիրոյ առջերից: Սէրը մի շտավառ խարոյի է, որ արեան ոչ մի հե-

ղեղով չի հանգչի: Քրիստոնէական սէրը, ասում է, մի խմաստասէր, ձեռքերից շըդման խորապես, ոտքերից կապանքներն արձակող և մարդուն ազատութիւն տուող ոյժն է: Եւ իրաւունք ունինք պնդելու տուեք քրիստոնէական սէր, և կԾնջուի աշխարհից ամենայն չարիք ու բանութիւն:

Քրիստոնէական այս մեծ ոյժին էք պարտական, կանայք, որ երբեմն մութ կամարների տակ կթառամեիք Աստուծոյ արևելից ու անձըեկից զուրկ ծաղկի նման՝ խտրող հեթանոսութեան, հեթանոս անհաւասարութեան երեսէն: իսկ այժմ Աստուծոյ արեն ու անձըեկ և ձեզ վերայ կտեղայ ու ազատութիւն կշնչէք:

Այս ոյժին ես պարտական, երբեմն աշխարհի հզօրին սարուկ, տիրոջդ ձեռքով փաճառաաներում անասունի պէս վաճառուող հէզ մարդ՝ քեզ համար յառաջ գնալու յոյս չկար. սարուկ էիր ծնուած, ստրուկ պիտի ապրեիր, ստրուկ մեռնէիր: իսկ այժմ քրիստոնէական սէրը քանդել է կապանքներդ, սիրիր, աշխատիր, զօրացուր հոգիկ և վաղը իշխանական աթոռ նստելու իրաւունք էլ կուշնենաս:

Այդ սիրուն ես պարտական մանուկ աշակերտութիւնն, երբեմն սրունքներդ կռջի մէջ գամած, բրածեծ ու հոգիկ բռնութեամբ դաստիարակուող աշակերտութիւնն, հասակաւորներից արհամարհուած պատանեկութիւնն: Իսկ այժմ: այժմ: քո հասակդ, քո կեանքդ և հասակաւորներին է ցանկայի գարձել: Յիշում ես թէ ինչպէս քո հասակակիցներիդ արհամարհուած նստելու նախատեց սիրոյ փարզապեսն ու ձայն տուաւ. «Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս:

Վերջապէս ո՞րը թուեմ՝ քրիստոնէական սիրոյ արդիւնքներից. բարձր ի գլուխ պանծացող աստուածահանոյ հասատութիւնները, հաւասարութեան ուղին, ազատութիւնը, անվերջ են այդ աննման ոյժի արդիւնքները: Այս արդիւնքի առաջն էլ խոնարհուում սըրտերի մեծ աշխարհակալ Պօղոսն ասելով. «Լեզուները կլանեն, մարդաբէութիւնները կիսափառուին, իմաստութիւնը կիսափառուի, բայց երեք բան ընդ միշտ կմնայ՝ հաւասաւ յոյս սէր,

և սոցանից ամենառեծը սէրն է: Դա մի համաշխարհային լեզու է, որ խօսում է կրթեափի և անկիրթի հետապնդութեան մի զիանոց հետապնդութեան մի անժամանակ անցագիր մարդկանց սրտերի աշխարհը շքջելու:

Արդ քրիստոնէական սիրով մկրառուած իմ ունկնդիրները քրիստոնէական կրօնը սիրոց կրօն է, խակ սէրն առենութեք պիտի լինի ուստի քրիստոնէական կրօնը ոչ վանքերի կամարներուած պիտի քարանայ և ոչ կրօնաւորների կրծքուած պիտի կաշկանդուի: Նա ամէն տեղ պիտի մոռնի, գերդաստան, գատարան, տաեան, ապարանք ու խրճիթ, ամէն տեղ պիտի թափանցէ: Մի վայրիկեան հանեցէ,ք կրօնից սէրը, և դուք մի անհուն զատարկութիւն կունենաք, արեան գետերի մի անվերջ հոսանք՝ հրեշտակ մարդուն արիւնը ուշուած, առելութեան խաւարը ձեր հոգու վրայ իջած:

Քրիստոնէական սէրն առ մարդ և առ Աստուած՝ անխզելի շղթայով են կապուած: Ճայ ճշմարիտ սէր առ Աստուած՝ առանց սիրոյ առ մարդ, Փրկիչն Յիսուս մարդ կային գերազանց կողմերի մարդմացութն է, կարելի չէ Յիսուս սիրել երբ մարդն ես ասուած, և ընդ հակառակն:

Այս ամէնից յետոյ յորդորուած եմ ձեզ, վառ պահեցէ,ք ձեր հոգու մէջ սէրն իրին սրբազն զոհի նուիրական հուր, վարժուեցէ,ք այդ սիրուն ու կհամնզուիք թէ՝ եթէ ձեռ, ձեր կենաց զրբում կայ մի փայլուն երես, որ սիրուն անհուն հրճուանքով է, լցնում այդ այն վայրիկեաններն են, երբ դուք Յիսուսի սիրով է,ք սիրուած:

Մայրե՞ր, երբ ձեր զլուխը ծոփ ձեր հոգու հասոր զաւակի օրօրոցի վերայ և ժամփուն ու համրոյը կաթին մանկան վարդ երեսն ի վար հետն ել սէր: շշնջացէ,ք մատաղ ականջն:

Երիտասարդ, երբ սրտիդ ու մաքիդ ընկերն հանդիպես ու կարօտագին կերպով զըդուիք զիրարար շշնջիր սէրն է, այս:

Հայ մարդ, երբ սոլդակիդ խոցերի վերայ ձականիդ քրառունքն ու աչքիդ ցողը թափուի ու լուանայ, միմիթարուիր ու կարդա սէրն է այս:

Հայ ծերուկ, երբ լայնարերան գերեզմա-

նի քովը կանգնած աչքի յառած զեպի սիրապասի խաչն Յիսուսի որից յայսերի մի առաջ ցող է իջնուած կուրծքդ ու հանդցնուած այնակեղ մահու տագնասովը շշնջաւ գերեզմանից հետու կանգնած սէրնին «սէրն է այս :

Երբ սպաշխարութեան օրերուած ձեր աչքերը սեհառուեց կարմիր խաչափայտին, թողձեր մրմնանցն ու ազօմքն այս լինի Տէր իմ Յիսուս Տէր իմ Յիսուս Եկեղեցի եկ սիրովդ անհուն աիրել, հոգուս \*

Բննիկ վարդապետ



## ԺԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

(ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔԻՑ)

Մարտիրոսութեան ասպարէզ միշտ կայ: Քրիստոսի սուրբ վկաները կուպաշտութիւնը յաղթահարելու, տապալելու համար պատերազմում էին բռնաւորների հետ Որկամոզութիւնը ըզջախոհութիւնը մեղքի բռնականերն են, որոնց գէմ պէտք է մարտնչել, և ով նրանց յաղթէ միևնոն է թէ մենաններ է կործանուած, կուպաշտութիւն ջնջուած ու դասակից լինուած Քրիստոսի քարեզոց, կատարելապէս խոստովանող նահատակներն:

— Մենք երկնաւոր թագաւորի զինուողներն ենք. երբէք մեր մարմնին շըպէտք է հանգըտութիւն առնք, այլ քանի այս աշխարհնումն ենք, միշտ պիտի պատերազմներ արդարութեան համար: Այդ սիրուած է մարմնի հանգտութիւն և վակիութիւն, նորանից հեռու է Աստծու երկեղը:

— Քրիստոնեան պարտաւոր է խաչել իւր անձը հոգենոր կատարելութեան համար, անձնատուը ըմբնելով նիւթապաշտութեան և մարմնի կորստեան նպաստող մեղկացուցիչ վայելքների: Հականի վախենալ սովից, ծարաւից, ցըտից, ցաւերից, բամբասնքից, պէտք է տոկալ, պէտք է վարժուել ճշնելու հոգւով, մտքով, սրտով, եռանդով և արելութեամբ մղել պատերազմ սրբութիւնը պաշտամնելու համար:

— Երանելի Յովհան Ռոկեբերանն առաց, սու ըբ

\* Խօսուած է Երևանի ս. Պօղոս—Պետրոս եկեղեցում 1900թուի պահոց երկրորդ կիւրակէին: